

Այս եզրակացութենէն չի բխիր այն, որ մենք մշտական թշնամի պիտի մնանք թուրքին, կամ, առհասարակ ուստական օրիենտացիան պիտի մերժուի հայ ազգի կողմէ :

Հայ ժողովուրդը կամաց կամաց կը հաշտուրի այն մտքին հետ, որ Արարատի փէշերուն տակ ամփոփուելով, ինք աշխարհագրական եւ ազգագրական ինքնայատուկ միաւոր մըն է եւ առանձին է :

Այս առանձնութեան հետ պէտք է հաշտուրուինք : Մենք չըջագատուած ենք թաթարական տարրերով եւ անոնց հետ անհաշտ պայքարի մէջ ենք, հայկական ազատագրութիւնը զլուխ բերելու համար : Մինակ շմալու համար, մենք այդ տարրերուն ձեռք չենք կրնար կարկառել : Ինչպէս նաեւ չենք կարող հակիլ զէպի մեր այն դրացիները, որոնք իրենց շահերու բերումով թուրք-թաթարական նժարի կողմ ծանրութիւն կը դառնան :

Մենք բարեկամ ենք Պարսկաստանին, եւ դաշնակից ու բարեկամ քիւրդ ցեղին, բայց այդ բոլորը չեն զօրեր մեզ մեր առանձնութենէն հանելու : Եթէ մեզ հետ ըլլար Վրաստանը, կասկածէ զուրս է, որ Կովկասի հաւասարը չուրթիւնը կը փոխուէր : Իսկ եթէ ան մեզ հետ չէ, կամ բուլղերիկեան Ռուսաստանը նոր թուրքիան կը զօրացնէ, հայերու առանձնութենէ կրնն ռ անոնց փէշերուն տակ մտնելը, որեւէ օգուտ չտալէ զատ, հայ բազմութիւնները կատարեալ ինքնախարէութեան կը մատուցէ :

Բուլղերիկեան Ռուսաստանի վերացման պարագային, մենք պիտի դիմաւորենք նոր Ռուսաստան մը : Բնական է, որ Հ. Յ. Դաշնակցութեան բաղձանքն է տեսնել զեմոկրատիկ հանրապետական Ռուսաստան մը, ինչ որ ամենէն հաւանականն է :

Եւ անձամբ, միապետական Ռուսաստանի մը կեանքի կոչուելուն չեմ հաւատար : Բայց ենթադրենք, որ բուլղերիկեան Ռուսաստանին յաջորդէ որեւէ ուստական վարչաձեւ, մէջն ըլլալով ամենէն վատը, միապետականը : Այդպիսի Ռուսաստան մը համաշխարհային տիրապետութեան կամ այլ բարբառով տիեզերական յեղափոխութենէ պիտի հրաժարի : Այդ Ռուսաստանը ըլլայ ուժեղ՝ այսօրուան բուլղերիկ-

ներու չափ, կամ ըլլայ աւելի տկար, թրքական խնդրի մէջ, պիտի ջանայ լեզու մը դառնել եւրոպական մեծ գիշատիչներուն հետ, թրքական հողէն բաժին մը կորցելու համար : Որով, բուլղերիկեան վարչութենէն յետոյ, ինչ վարչութիւն ալ որ ունենայ հիւսիսի մեր մեծ դրացին, թուրքիոյ բաժանման պիտի համաձայնի եւ պիտի հանդուրժէ ուրիշ բաժնեակերբու ներկայութիւնը : Երբ արեւմտեան ուժերը ուղենան իրենց բաժինն առնել, այդպիսի Ռուսաստան մը, որ ուժեղ է, իր արեւելեան բաժինը պիտի առնէ, այսինքն՝ այն հողամասերը, որոնց պահանջատէրն է հայ ժողովուրդը : Այդպիսով, փաստօրէն հայկական հողամասերը կը միանան, կը ստեղծուի Միացեալ Հայաստանը, եւ մենք կը մտնենք պայքարի նոր փուլի մը մէջ, դիմելու զէպի Անկախ եւ Միացեալ Հայաստան :

Թուրքիոյ բաժանման ձգտող Ռուսաստանի օրիենտացիան հայ ժողովուրդին ընդունելի է : Նոր Ռուսաստանի զէպի այդ նպատակն առնուած քայլերն իսկ սիրով պիտի ողջունուին հայութեան կողմէ : Զգաստութեան քարոզներն իսկ չպիտի զօրեն, որ ան չհակուի ուստական ուժի կողմը :

Տարբեր հարց է, որ հայ ժողովուրդը իր ամբողջական անկախութեան համար թերեւս բացառաբար պայքար մզէ Ռուսաստանի դէմ : Այսօր հայ ժողովուրդի ամբողջական ձգտումն է անկախ ըլլալ բուլղերիկեան Ռուսաստանէն, որպէսզի այդ անկախութեան շնորհիւ ան իր ուժերն ամփոփէ, կազմակերպէ եւ տիրանայ միացեալ Հայաստանին : Իսկ, եթէ այսօր մեզի կը զյացուի մեր ազգային անկախութիւնը, մենք կը սպասենք բուլղերիկեան Ռուսաստանէն (անկարելի բան մը) կամ անոր յաջորդող նոր Ռուսաստանէն, որ իր տիրապետութիւնը կամ աւելի մեղմ բառով, իր հողատարութիւնն արժեքնէ զէթ մէկ բանով. — իր հողատարութիւնը տարածէ միացեալ Հայաստանի վրայ, զըրաւելով հայկական բոլոր հողամասերը :

Երբ հայկական հողային ամբողջութիւնը ստեղծուի եւ հայահաւաքման գործը որոշ չափով լրանայ, անկախութեան խնդրը պիտի դառնայ աւելի հրատապ, քան այսօր է : Հայ հաւաքական ազատ կամքը կարող է Հայաստա-